Այսօր, դաշտը, իմ իսկ աչքերով, նայում է հոգուս մէջ: Այնպէս եմ, ինչպէս հաւատացեալը խոստովանանքից յետոյ: Միացած եմ մի ինչ որ ուժի. մաս եմ եւ հաղորդակից:

Պէտք չունեմ, ինչպէս խօլական թռիչքների վայրկեաններին, հսկայի ոտքեր առնել եւ, արագ քայլերով, դաշտը կոխել եւ անցնել: Ու պէտք չունեմ, խոնարհութեան մեծ պահերի պէս, մրջիւնի նման փոքրանալ եւ, խոտերի միջից, նայել բոյսերի տատանուող ովկիանին:

Լա՛ւ եմ, ինչպէս եմ:

Ինձ հետ եմ: Ես եմ:

* * *

Ցիշում եմ, Ալպեան ճամբու վրայ՝ հռոմէական լեգէոնների յաղթական արշաւանքը, ժամը հարիւր կիլոմետր, ինքնաշարժի անիւների տակ, անողոք կոխկրտեցի: Լուսինը — օ՜, Ջիովաննա — սիրային վէպիս աչքերի մէջ ոսկի էր լեցնում: Ու Կեսարների դրօշակները ծածանւում էին մութի դէմ:

Հռոմայ դաշտում, կախարդող մելամաղձութեան դէմ, սրեցի զգացումներիս սուր դանակը եւ կոխեցի կրծքիս՝ պատմութեան հանքերից պոկած, բոլոր յուռութուլունքները:

Մի օր էլ, Պօի դաշտում, զմրուխտէ լճերի շուրջ օրերիս պսակը ծաղիկներով զարդարեցի եւ լոյսերի մէջ քաղեցի զմրուխտ եւ սուտակ:

Այստեղ՝ ադամանդէ այս ծառի առջեւ՝ մատերս մերկ են եւ ճակատս խոնարհ: Պանդրխտի քայլերս հասցրել են ինձ՝ մինչեւ ինձ: Եկել եմ եւ էութեան չէմին առջեւ կանգ առել:

Ա՛յս եմ:

* * *

Երբ Երեւանից իջնում ես դէպի դաշտ, Զանգուն, ջաղացների անիւների տակ դեռ շարունակում է խաղալ իր աղմկալից բաժոժների հետ:

Բաղերը, արթնացող օդի թրթռումի մէջ, իրենց զպուած յոյզն են թաթախում: Շարքով կանգնած բարտիները, կարծես, բարձրանում են իրենց արմատների մատերի վրայ՝ աւելի հեռու եւ աւելի բարձր տեսնելու համար:

Արագիլները, մտածկոտ նաւերի պէս, առագաստանման թեւերի վրայ, սահում են: Թռչունները երգում են: Կայծկլտում է ներկարարը: Գրեթէ անամպ երկինքը լուսաւորութեան մէջ սաւանացած է:

Այդպէս դնա՜լ, անվերջ դնալ:

Մօտաւոր դիւղից մի քանի սայլեր են եկել, ճռռալով անցնում են: Եզները, իրենց կարճ ոտքերի վրայ հսկայ մարմիններն են օրօրում, զառիվարի առջեւ վախցած կանգ առնում եւ երկար ճպտոնների հարուածների տակ, դրեթէ չոքելով, իջնում:

Նորից բաղեր են: Հողից կերտուած պատերի ետեւ, անկանոն ակօսների մէջ, պառկել են որթենիները եւ ամեռուայ ցրտի տակից նայում են բարտիներին:

Մի քիչ էլ անցնեմ, այլեւս դաշտ է:

Գրեթէ կանանչութիւն չկայ: Դեղին, մարած ոսկի տարածութիւն, որի վրայ ծաղկել է լայնատարած մի լռութիւն:

Այդպէս դնա՜լ, անվերջ դնալ:

Մենակեաց մարդը իր խոհերի եւ զգացումների հովիւն է: Խօսում ես քեզ հետ, ինչպէս պիտի խօսէիր ուրիշին. պարզօրէն՝ ցորեն հնձելու նման, լռիկ — ինչպէս մեծ ապրումների վայրկեանին:

Ու մեր մտահայեցութեան առջեւ դաշտը եւ լեռը ցցւում են ուրոյն բնաւորութիւններով: Ո՞վ է իմանում, ինչպիսի խորախորհուրդ ձեւափոխութիւններից անցած է նրանց գոյացման կերպը:

Կան մարդիկ, որոնք անցնում են կեանքի վրայից, մրրկի պէս, ինչպէս անցաւ Թամերլան իր հրաշունչ ձիի վրայ: Կան նաեւ մարդիկ, որոնք փոթորկալից ծովերի մէջ մնում են վառ մոմի պէս, ինչպէս Մաշթոցը իր քարայրի մէջ:

Այդպէս է լեռը եւ այդպէս է նաեւ դաշտը:

Հսկայ լեռների մէջ սեղմուած, հայկական այս բարձրաւանդակի վրայ, ալեւոր Արարատեան դաշտը բացել է իր սիրտը եւ մտածում է անվերջ մի միտք: Խոր, տիեզերքի էութեան մէջ մխրճուած, մեծ մի մտածում, որը մասն է անըմբռնելի, խորհրդաւոր, ուրիշ մի կեանքի:

Տիեզերքը յայտնւում է մեզ հազար ու մի կերպով: Եթէ մարդու դէմքը արտայայտիչ է, եթէ նրա աչքերը յոյզեր ցոլացնող լուսանցքներ են, լեռները ու դաշտերը, հովը եւ անապատը, երկրագնդի բոցավառ ապրումների ճշմարիտ եւ ուղղակի արտայայտիչներն են: Ու մի օր պիտի գայ, անշուշտ, երբ մարդ պի-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան